

Հայաստանի ՓՄՁ Հիմնադրամ

Երկիր՝	ՀԱՅԱՍՏԱՆ
Ծրագրի համարը՝	47805
Բիզնես ոլորտ՝	Մասնավոր կապիտալի հիմնադրամ
Ծանուցման տեսակը (պետական/մասնավոր)՝	մասնավոր
Բնապահպանական կարգ՝	FI
Կարգավիճակը՝	Անցել է հայեցակարգի քննության փուլը, սպասվում է վերջնական ուսումնասիրություն:
Ծրագրի ամփոփված փաստաթղթի հրապարակման ամսաթիվը՝	2016թ. ապրիլի 25-ը

Ծրագրի նկարագիրը

ՎՋԵԲ-ը դիտարկում է մասնավոր ներդրումային հիմնադրամում (այսուհետ՝ «Հիմնադրամ»), որի ուշադրության կենտրոնում Հայաստանն է, ներդրում կատարելու հնարավորությունը:

Պոտենցիալ ծրագիրը կազմում է փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման և խորհրդատվության գործիքի մի մաս (այսուհետ՝ «Գործիք»), որը ՎՋԵԲ-ի և Եվրոպական Միության համատեղ նախաձեռնությունն է: Այն կենտրոնանում է մասնավոր հատվածի զարգացման և, մասնավորապես, հայաստանյան ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիության բարելավման վրա:

Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է օժանդակել հայաստանյան ՓՄՁ-ների համար հասանելի ֆինանսավորման լուծումների դիվերսիֆիկացմանը՝ միևնույն ժամանակ հանգեցնելով կապիտալի երկարաժամկետ աճի՝ տրամադրելով կապիտալի բաժնեմասնակցային և քվազի-բաժնեմասնակցային ֆինանսավորում, որը երկրի անցումային շրջանի առավելագույն խնդիրներից մեկն է:

Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Ծրագրի ազդեցությունն անցումային շրջանի վրա կայանում է նրանում, որ այն անդրադառնում է հայաստանյան ՓՄՁ-ների համար կապիտալի ֆինանսավորման բացակայության խնդրին՝ բարելավելով կորպորատիվ կառավարումը տեղական ՓՄՁ-ներում և ստեղծելով տեղական մասնավոր կապիտալում ներդրումների կառավարման կարողություններ:

Հաճախորդի մասին

ՎԶԵԲ-ը կցանկանա աշխատել հիմնադրամի այնպիսի կառավարչի հետ, որը կարող է ապացուցել, որ ունի նվիրված և ունակ կառավարող թիմ ու Հայաստանում փոքր և միջին բիզնեսի հնարավորություններին անդրադարձող հետևողական ներդրումային ռազմավարություն: Որի շահերը համահունչ են պոտենցիալ ներդրողների շահերին և որը կարող է ներգրավել հավելյալ արտաքին կապիտալ Հիմնադրամի համար:

Պոտենցիալ հավակնորդները/հիմնադրամի կառավարիչները/ պետք է ՎԶԵԲ-ին ներկայացնեն նյութեր, որոնք ուրվագծում են շուկայական միջավայրը, ներդրումային ռազմավարությունը, նկարագրում են կառավարող թիմը և այլ համապատասխան ասպեկտները, որոնք մանրամասն ներկայացված են այստեղ.

www.ebrd.com/ebd-armenia-private-equity

ՎԶԵԲ-ը կարող է իր բացարձակ հայեցողությամբ որոշել հետաձգել կամ ընթացք չտալ այս պոտենցիալ բաժնեմասնակցային ներդրմանը:

ՎԶԵԲ-ի տրամադրած ֆինանսավորումը

ՎԶԵԲ-ը քննարկում է հիմնադրամում մինչև 5 մլն ԱՄՆ դոլար ներդրում կատարելու հնարավորությունը:

Ծրագրի ընդհանուր արժեքը

Հիմնադրամը պետք է հասնի միջոցների նվազագույն չափի, որը կազմում է 25 - 30 միլիոն դոլար և ներառում է հանձնառություններ հեղինակավոր արտաքին ներդրողների կողմից:

Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ամփոփ նկարագիր

Ծրագիրը ստացել է FI դասակարգում (2014): Հիմնադրամը պետք է պարտադիր կերպով համապատասխանի ՎՋԵԲ-ի՝ Կատարողականի նկատմամբ պահանջներ 2, 4 և 9-ին, ընդունի և իրականացնի ՎՋԵԲ-ի՝ բնապահպանական և սոցիալական կանոնակարգը ակտիվ բաժնեմասնակցային ֆոնդերի վերաբերյալ և Բանկին ներկայացնի տարեկան բնապահպանական և սոցիալական ասպեկտների վերաբերյալ հաշվետվություններ:

Տեխնիկական համագործակցություն

Առկա չէ: